

Սոցիալական փաթեթի շրջանակում ներկայացվող փաստաթղթերն են՝

- 1) նույնականացման քարտ կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ
- 2) կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք, որտեղ արտացոլված են ծառայությունը մատուցող կազմակերպության վավերապայմանները և ծառայությունն ստացող ֆիզիկական անձի տվյալները (անունը, ազգանունը, բնակության վայրը, քաղաքացիությունը, անձնագրի տվյալները (սերիան, համարը, վավերականության ժամկետը, ում կողմից է տրված), ծառայության տեսակը և փոխանցման նպատակը):
- 3) հաշիվ-ապրանքագիր՝ համապատասխան վավերապայմաններով:
- 4) սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, որը ներկայացվում է սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում և տրվում է սոցփաթեթի հաշիվն սպասարկող նոր բանկի կողմից
- 5) տեղեկանք հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից օգտվելու դեպքում, երբ հիփոթեքային վարկը տրամադրված է Բանկի կողմից
- 6) սոցփաթեթի հաշվետիրոջ ընտանիքի անմիջական անդամի սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու դեպքում գումարի փոխանցման համար հինք հանդիսացող փաստաթղթեր
- 7) հանգստի ապահովման ծառայության վճարման փաստաթուղթ՝ հանգստի ապահովման ծառայության մատուցման ամսաթվի/ժամկետի մասին պարտադիր նշումով, ընդ որում վճարման փաստաթուղթը Բանկ է ներկայացվում մինչ տվյալ ծառայությունից օգտվելը կամ ծառայության մատուցման ամսաթվից 15 օրից ոչ ուշ